

ՔԱՆԱՍՏԵՆԾԱԿԱՆ

ԱՐԻԻՆ ԵՒ ՀՈՒՐ՝

Ք.

Երկնք երկին եւ երկիր
 Երկնք եւ ծիրանի ծով,
 Երկն ի ծովուն ունեւ
 Զկարմրիկ եղեգնիկն:
 ԽՈՐԵՆԱՑԻ

Համայնական այս աւերին
 Ու արիւնին դիմաց կանգուն,
 Զերթ եղեգնիկն,
 Հազար մահով դեռ չըմեռած
 Կը դիմանաս ժողովուրդ իմ,
 Գրլուխդդ հեց տառապանքի
 Անհուն խաչին,
 Ու սրբիդ սուր,
 Բըռնած բաժակն արցունքներուն
 Եւ արիւնին:

Կ'իյնան ռումբեր
 Շուրջդ ու հեռուն,
 Ու կը պայթին հրազէններ
 Բոց բոց, վէրք վէրք,
 Արեւուն դէմ, աստղերուն հետ:

Բոցեր անհուն վայլակնային
 Զայնքուն մէջ երկրասասան
 Կը պատռուին ու կը մեռնին:
 Ըսես երկինքն ըլլար քակուած
 Իր մասերէն,
 Դուրս պոռթկալու
 Զայնով կըրակն այդ անաւոր:

Գիշերն անհուն թեւ պատանքի,
 Արիւնամած,
 Գըմբէթն ի վառ.

Սուրբ Յակոբի
 Կըսո՛ր կըսո՛ր կը խորհակուի:

Կ'իյնան ռումբեր,
 Ու կը պայթին հրազէններ,
 Տանիքներուն, կամարներուն,
 Գաւիթներուն մէջ սրբազան
 Մենասանին,
 Ուր ծըլարած լուռ կը ճըսկեն,
 Հազար մահով դեռ չըմեռած
 Մանուկ ու ծեր կին ու աղջիկ:

Ու կը բացուի ճըրասանդին
 Սիրք կարմիր, սիրք երկաթ,
 Դրանդին դէմ եկեղեցւոյ
 Եւ կամ բակին՝
 Ու կը դողան կամար ու պատ
 Ծածկ ու երդիք:
 Եւ կը սարսիմ
 Հոգիները մեծ ու պըզտիկ,
 Ճիչն ու աղոթք
 Բոլոր բոլոր հասակներուն
 Իրարու մէջ իրարու հետ:

Յետոյ ուրիշ, ուրիշ ձայներ,
 Միշտ բացըրփիկ լոյսի մէջէն,
 Յետոյ ուրիշ յետոյ ուրիշ,
 Կարծես նուազ մ'այլուրային

ԵՂԻՎԱՐԴ-Ի ԱԿԵՊՊՈՎԱՆ խորագրով նոր գործէն մաս մը՝ որ կ'անդրադարձէ վանքին մէջ ասպատան զօած
 ժողովուրդին սիւնակը, Պաղեստինի դէպքերու ընթացքին:

Ձոր ածելին հովին վրայ
Անեսն ձեռներ :

Կ'իյնան ռումբեր
Ու կը պայթին հրազէններ,
Ապահով ո՛չ մէկ ապաստան.
Ռումբ մ'աւելի կ'արծէ այլեւս
Քան թանգարան :
Նըծարին մէջ գազանացած
Այս աշխարհի որդիներուն,
Թանկ կը կրճռէ կապարն անարգ,
Քան մարդերու կեանքն ու պահու,
Կաթողիկէն ու ապարանք :

Կ'իյնան ռումբեր,
Յօրինելու,
Լոյսի, ձայնի, արիւններու
Հանդէս մ'անհուն, անպարագիծ :

Կը պրլլուի մանուկն իր մօր,
Մայրն ամուսնոյն,
Ու կը կանչեն զիրար բոլոր
Առանց ձայնի ու նայուածքի,
Մէկուն գանկէն
Շառաւիղով մը արիւնի,
Միւսին կողէն, սրունգներէն
Աղբերացող մահուան գիւնին :

Կին մը ահա գեղահասակ,
Տաւեր ինչպէս աղբիւրին տակ,
Մարմնէն արիւնը հոսելով :
Մանուկի մը փոփկն անոր
Գանկն է պատեր :
Պատի կուսիւն կը դողդըղայ
Արիւնին մէջ
Ծեր մը զրոգոյն,
Իր շրթներուն բառն է սառեր,
Անէ՛ծք, աղօթք,
Մարդ չի գիտեր :

Բայց կը պայթին հրազէններ,
Կ'իյնան ռումբեր,
Անոնց ռիթմին տակ հրացայտ

Ժիր ու կրտիչ պարմանիներ,
Թեւերուն՝ խաչ,
Մահուան հանկէն դես կը խըլեն,
Մահուան մօտէն անցած կեանքներ :
Մինչ կը տեղայ կը ծաւալի,
Մահուան թելով,
Կարկուտն անհուն
Կապարներուն,
Ու ձայնն անանց անպատելի
Կրտաւ թանձր սարսափի :
Ու շուրաւթ բազմութիւններ
Իրար վրայ իրարու դէմ,
Քար են կրտրեր դէմքերն ամէն :

Քիչ մը անդին,
Նեղմայրակի մ'ապաստանին
Հոյն անձրնօր կարմիր խաչի,
Կէս գիշերուան անեղ ժամին,
Արցունք արցունք, ժրպիտ ժրպիտ,
Կը հանդերձէ
Նօրէն բացուող վէրքը հայուն :
Կը դարմանէ իրմէն անդին
Վէրքն օտարին,
Վէրքն արաքին ու հրէին :

Վէրքը անոնց՝
Որ դեռ երէկ
Մեր մարմինէն առաջ բացին
Վէրքը անբոյժ մեր սիրտերուն,
Երբ ծակեցին կապարներով
Դուռն հինաւուրց
Մենասանին,
Անարգելով կարգն ու արգելք,
Եւ օրէնքները սրբազան
Խալիճներուն,
Խոստումին մէջ մեծ մատենան
Իրենց ցեղին :

Վէրքը անոնց՝
Որ դեռ երէկ, դարանակալ,
Կը սրէին թուր ու դաշոյն
Ծարաւ արեան, ծարաւ ինչիւն
Դըժբախտ հայուն,

Ու շրմական հայույններով
Կոչելով զայն՝
Ուրման խաչին :

Ո՛վ աննըման, անպատմելի
Հայ պատմութիւն,
Տարբեր որուն զիրն են զբերեր :
Մենք դարերով ենք կարգացեր
Գիրն այդ կարմիր,
Խորաններուն դէմ խարոյկին,
Լիներուն մէջ արիւններուն,
Շիրիմներու անգութ փարին :

Ո՛վ աննըման, անպատմելի
Կեանքն հայուն,
Ինքզինքն ըրած իրմէ անդին
Եւ իրմէ վեր՝,
Լուռ պատարագ
Եւ ապրելու անպատմելին :
Հոս ես նորէն,
Փրշուր փրշուր,
Հարուածին տակ ճակատագրին
Պլուած փեշին փու աստըծոյդ՝
Կամարներուն տակ սրբազան
Գրիսաղիի :
Հոս ես նորէն,
Ռումբերու տակ եւ անտէրունջ
Շունին, զայլին, աւազակին,
Գինովն ուժին փու արիւնին :

Ո՛վ աննըման, անպատմելի
Հայ պատմութիւն .
Սեռ նորէն
Բացուող փոսեր ,
Երկարելու տարանն անհուն ,
Մեռելներուդ ,
Կրակ համբիշ արիւնաբամ
Չաւկըներուդ ,
Արեւելէն մինչ արեւմուտ :

Հոն այն մըքին կամարին տակ ,
Չուրկ արեւու լոյսէն անգամ
Եւ անդազադ ,

Տես կը հանգչին հազար վերով
Մեռելներ նոր ,
Իբրեւ պատանք արիւնքաթախ
Շապիկն է լոկ իրենց ուտին .
Այնպէս անուշ ու այնպէս փողոց ,
Ողջերուն հետ ողջերուն փով :
Կեանքի մահուան եղբայրութիւն :

Հոս է անա սիրտ մը սրդու ,
Որ դեռ երէկ ,
Երազի կոյս ծառին ներքեւ
Ձիւնասերեւ ,
Իր շրթներուն կը դողողդար
Համը հրգօր այս աշխարհին ,
Ու իր անուշ նայուածքներէն՝
Լոյսն իր սրտին
Կ'աղբերանար ու կը բաշխուէր ,
Հոգիներուն հետու , մօտիկ :
Այժմ իր հոգին՝ թրուչուն սրտում ,
Կապոյտին տեղ կըսցած
Յաւը դեռ չապրուած
Տարիներուն ,
Ո՛վ գիտէ թէ ուր կը շրջի ,
Սուսանք իր մօր տալու կուրծքին :

Հոն՝ այլ մը մօր ,
Որ չէ փակուած
Հասակին դէմ
Իր մանկիկին :

Քիչ մը անդին
Ոսկեպրտակ զրլուխ հարսի ,
Հազիւ կապած նարոջ սուրբ
Հայ կիներուն ,
Աչներուն մեղք՝
Եւ արգանդին հազար երազ :

Այսպէս է զիրն մեր ամենուն ,
Գիրը հայուն ,
Ո՛վ աննըման
Չարհուրելի հայ պատմութիւն :
Բայց արդար է կեանքն հայուն ,

Փուռէն ելած հացին պէս սափ,
 Զոհողութեան ակօսներէն,
 Արիւն արիւն, բըրժնիք բըրժնիք
 Իբար հիւսուած,
 Ինչպէս բաժակն երկնակնիք:
 Իմաստն անուշ գեղեցկութեան
 Այս ամենուն,
 Աւրը արեան,
 Աւրը հայուն,
 Որ իրարու կը շողկապէ
 Սիրտերը մեր,
 Ինչպէս որան խարսիւ ազեղ,
 Իրարու հաւատ ընծայելով
 Բոլոր կամքեր,
 Սեւ աղէտի թաթին մերքեւ:

Ու հեղեղին դիմաց ցաւին
 Ու զորկանքին,
 Անոնք բոլոր,
 Սիրտերն իրենց ըրած սեղան
 Եղբայրական,
 Փաստը Տրւին անա մորէն
 Ազնուական իրենց արեան:

Ու դեռ անդին,
 Տանիքներուն, դարպասներուն,
 Երիտասարդ ու պարմանին
 Զէն ի ձեռին,
 Տես կը կենան
 Ընդդէմ գողին, աւազակին,
 Ընդդէմ բոլոր վրասնագներուն
 Գիւտերատող,
 Ժանիքն որոնց
 Միշտ հանդիպով է կարկառուներ,
 Հայու ինչքին ու արիւնին,
 Հայու պատուին:
 Երիտասարդ ու կորովի,
 Հաւատ կը նային
 Մահուան աչքին,
 Կեանքներն իրենց ըրած վահան
 Ու աւտանակ,
 Մահուան մեքին ու խաւարին:

Ու դեռ հեռուն,
 Երդիքներուն սակ ապահով,
 Ցամաքներէն ծովէն անդին,
 Հարազատներն մեր արիւնէն,
 Արցունք, արցունք,
 Տես կը դրկեն բաժինն արդար,
 Քրտիկներովն իրենց շահուած:
 Վէրքիդ համար մորէն
 Բացուած,
 Կը պատահասեն
 Գինի ու ձէթ:

Ամենէն վեր, ամենուն դէմ,
 Կը թեւածէ վանքը կախարդ,
 Հագած մորէն գէն ու ասպար
 Ընդդէմ բոլոր չարիքներուն.
 Բըռնած բաժակն իր զրմբէթին
 Խաղաղութեան,
 Այժմ լեցուն
 Արիւնովն իր զաւկներուն:
 Ո՛վ անըման
 Հայ պատմութիւն:

Արիւնին դէմ, խաւարին մէջ,
 Վանքն անասան,
 Երկնի վրայ ձեռնած վահան,
 Նետներուն դէմ, ռումբերուն սակ
 Ան կը մընայ,
 Իբր անկործան ոգին անուշ
 Ողջ հայութեան:
 Ան կը մընայ սապանն հրգօր
 Ընդդէմ բոլոր արիւններուն՝
 Ընդդէմ մահուան:
 Թեւերուն սակ ողբգոգով
 Ողջ ենք բոլոր,
 Ինչպէս երբեմն այն օրերուն,
 Երբ վանքն հայուն
 Տապանն էր սուրբ,
 Ընդդէմ սուրին ու կըրակին,
 Ընդդէմ մահուան:

Վանքն հայկական,
Ցեղի մը մեծ ու դարաւոր
ձիգը հուժկու,
Կամարներուդ մէջ թափ կ'առնեն
Սըլացքն անհուն
Երկինքներուն:

Ու խորանիդ առջեւ վառող
Կանթեղին պէս,
Կը հրկիզուին, կը պըլպըլան,
Տըրփի տըրփի եւ լոյս առ լոյս,
Կեանքներն անուշ
Բեկորներուն քու հարազատ,
Ունձնիւր անոնց՝
Մէկ մէկ ճըրագ,
Եւէկ Բանդուած հայութեան քան,
Ունձնիւրն անոնց՝
Մէկ մէկ պատուար
Ու ապաստան,
Նորանորոգ վաղուան յոյսին
Ու երազին,
Հայու կարմիր հայրենիքին:

Կ'իյնան ռումբեր,
Մօտիկ, հեռու,
Ու կը պայքին ճըրագէններ.
Վանքը կախարդ,
Ուննուն վանան,
Սիրս անկործան,
Միշտ բաբախող
Դըժոխներու կենիւնին դէմ,
Ձարիներուն ընդդէմ բոլոր,
Երեւելի աներեւոյթ:

Ու կը բացուի
Թեւն հըրաւքին
Միտքերուն մէջ,
Եկեղեցւոյ զըմբէթին տակ
Սուրբ ծերունին,
Պարիսպներուն՝
Համակ ներմակ,
Ձինն ու ասպետը հինաւորց,

Մեր սըրբազան
Հէփեսթներուն:

Դըմբէթին տակ
Սուրբ ծերունին,
Դաւազանով աղամանդէ
Տես կը բախէ,
Երկինքներու կապոյտ դրան.
Աղետեղու՝
Նաղաղութիւն ու բարութիւն
Վըրան արեան հեղեղներուն,
Ու ձայներուն մահասարսուտ
Մութ սիրտերուն,
Ձաւկըներուն իր հարազատ:

Այսպէս կ'ըսէ
Տեսիլքն անտուտ,
Յօրինելու ահա նորէն
Հըրաւքն հայուն,
Կեանքը որուն հըրաւք ինքնին,
Յաւիտեանէ մինչ յաւիտեան:

Ու կը պատմեն,
Երկու ծերուկ, երկու մանուկ,
Սկանջն որոնց՝
Վարժ է ձայնին երկինքներու,
Սիրտն որոնց՝
Որոնց անմեռ
Հըրաւքներու:

Ու կը պատմեն,
Երկու ծերուկ, երկու մանուկ,
Թէ գիշերուան անեղ ժամուն,
Շերն այդ հըրաւք,
Կը ճընշեցնէր արցունք, արցունք,
Ժըպիտ, ժըպիտ,
Ձանգակները Սուրբ Յակոբի.
Ինչպէս իրենց մայր կորուսող
Աստղերը լուռ,
Ինչպէս զաւակն իրենց թաղող
Ձեփիւններ սուրբ:

Կը հընչէին,
Տըռփ տըռփ, կաթիլ կաթիլ,
Անեկրային,
Ձանգակները Սուրբ Յակոբին,
Բանալու նոր բարիքներով
Ճամբան արեւ,
Ուրախութեան եւ արիւնի
Մեծ խորհուրդին:

◆◆◆

Ա.կեղդամա՛
Հընձանին մէջ արիւններուդ,
Ծոցն ալօսին քու հողերուդ,
Հայ արիւնին
Կոթեր են միշտ շիրտ մաքուր,
Եւ ու հիմա,

Հողերուն մէջ քու արիւնոս
Ու սըրբազան,
Կ'իյնան ահա,
Իբրեւ արիւն իբրեւ նըշար,
Խորհուրդին դէմ զոհողութեան
Ողջ հայութեան:

Ա.կեղդամա՛
Իցիւ թէ ա՛հ
Արիւնն անհուն
Ժողովուրդիս տառապահար,
Խաղաղութեան բանար իր թել,
Փոթորկին դէմ այս անսահման,
Կրակներուն՝ երկրակործան,
Մաքամաքուր
Ձերք ծիածան:

ԵՂԻՎԱՐԴ

Խ Ո Ր Ի Ն Խ Ո Ր Հ Ո Ի Ր Դ

Պիտի դառնան օրերն այսպէս կըծկելով թելը մեր կեանքին,
Պիտի խոցուինք միշտ պատահելն, ապաւինինք յոյսին կըրկին,
Մինչեւ օր մը, մօ՞տ թէ հեռու, մերին արեւն ալ խաւարի,
Ու մեր սըրտին կըրակը բորբ չըլագեցած մինչեւ մարի:

Մեզմէ յետոյ հազար ձեռով կեանքը պիտի ծաղկի նորէն,
Մարդիկ պիտի խընդան ու լան եւ անցնին հոյն համբաներէն,
Փռի դառնայ երբ սիրը մեր, սա արեւը բարի ու պերճ
Իր կըրակը պիտի թափէ ուրիշներու սըրտերուն մէջ,

Որ նոր սէրեր ու նոր իղձեր ու նոր երգեր հիսուսին նորէն
Ու ուրիշներ, իրենց կարգին, իրենց երազը օրօրէն...
Յետոյ մեզպէս անցնին խաբուած, բայց աշխարհէն այս անյագուրդ...
Ազօթ, անէծք իրար խառնած, կեանքը մընայ խորին խորհուրդ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

